

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

բ. Երևան

Գործակալության պայմանագրի կնքման սույն հրապարակային առաջարկը արված է «Գլոբբինգ» ՍՊԸ կողմից, ընկերություն, որը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում և գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա և ուղղված է քաղաքացիական իրավունքի բոլոր այն սուբյեկտներին, ովքեր ցանկություն ունեն անձնական կարիքների համար ապրանքներ գնել արտասահմանից և տեղափոխել դրանք Հայաստանի Հանրապետություն:

«Գլոբբինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իրեն իրավունք է վերապահում մերժել սույն հրապարակային պայմանագրի կնքումը այն անձանց հետ, ովքեր կասկածներ կառաջացնեն սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունների բարեխիղճ կատարման մեջ:

Համաձայն սույն պայմանագրի.

«Գլոբբինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Գործակալ) ի դեմս ընկերության տնօրենի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և սույն գործակալության պայմանագրի պայմաններին, սույն պայմանագրով սահմանված կարգով միացած անձը (այսուհետ՝ Պրինցիպալ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Գործակալը պարտավորվում է ըստ կողմերի համաձայնության Պրինցիպալի անունից և Պրինցիպալի հաշվին կատարել հետևյալ գործողությունները՝

- Պրինցիպալի հանձնարարությամբ և Պրինցիպալի կողմից նախապես կատարված ընտրությամբ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում, կամ առցանց Պրինցիպալի կողմից նշված պատվերի (այսուհետ՝ Պատվեր), իրականացնել Պատվերի գնում և/կամ կազմակերպել Պատվերի տեղափոխություն Պրինցիպալի նշած հասցեին:
- Պատվերը Պրինցիպալին առաքելու նախընտրելի ձևը (որոշվում է Պատվերի մեջ նշում անելով).
 - G-Express
 - G-Standard

1.2. Պայմանագիրը գործում է Պրինցիպալի կողմից սույն առաջարկի ակցեպտավորման պահից մինչև Պրինցիպալին Պատվերի հանձնում-ընդունումը և Պատվերի դիմաց ամբողջական վճարումը:

1.3. Պրինցիպալը պատվերի դիմաց վճարում է կանխավճարային եղանակով, Գործակալի կողմից կատարված լրացուցիչ ծախսերը և Գործակալի վարձատրությունը՝ Պատվերը ստանալու պահին վճարելու պայմանով: Որոշ դեպքերում, կախված Պատվերի առանձնահատկություններից, Գործակալն իրավունք ունի պահանջել վարձատրության կամ այլ ծախսերի վճարում սույն պայմանագրի կնքման պահին: Նման դեպքերում Գործակալի պարտականությունները ծագում են համապատասխան գումարները Գործակալին վճարելու պահից:

1.4. Կողմերը համաձայնվում են, որ Պրինցիպալն իրավունք ունի Պատվերներ տալ նաև

այլ անձանց անունից և նրանց համար: Պրինցիպալը հայտարարում է, որ ունի սույն կետով նախատեսված Պատվերները տալու ամբողջական լիազորություններ և կրում է Պատվերների համար վճարման, Պատվերների ընդունման, այլ անձանց կողմից Պատվերի կապակցությամբ ներկայացված առարկությունների հետ կապված բոլոր ռիսկերը:

1.5. Կողմերն ընդունում են, որ սույն պայմանագրի շրջանակներում Գործակալը երրորդ անձանց հետ հարաբերություններում կարող է հանդես գալ իր անունից, սակայն Պրինցիպալի հաշվին:

1.6. Սույն պայմանագրի շրջանակներում Գործակալի կողմից երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերով պարտականությունները ծագում են Պրինցիպալի համար, թեկուզ և պայմանագրերում նշված լինի Գործակալը:

1.7. Կողմերն ընդունում են, որ Գործակալը չի իրականացնում ապրանքների մատակարարում այլ միայն ծառայությունների մատուցման միջոցով օգնում է Պրինցիպալինձեռք բերել դրանք:

1.8. Կողմերն ընդունում են, որ սույն պայմանագրի հավելվածում նշված ապրանքի բնութագրիչ տվյալների մեջ նշված գինը չի հանդիսանում սույն պայմանագրի առարկայի կարգավորման առարկա կամ գնանշում և ուղղակի արտատպված է ինտերնետային կայքից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն պայմանագրով որոշված պարտականությունները կատարելիս Գործակալը պետք է գործի Պրինցիպալի ցուցումներին համապատասխան: Գործակալն իրավունք ունի հրաժարվել Պրինցիպալի ցուցումներից հետևյալ հանգամանքներում՝

2.1.1. եթե ցուցումներից հրաժարվելն անհրաժեշտ է Պրինցիպալի շահերի լավագույն ապահովման նպատակով.

2.1.2. եթե հնարավոր չէ տեղեկացնել Պրինցիպալին, կամ Պրինցիպալից ժամանակին պատասխան ստանալն անհնար է:

2.2. Գործակալը պարտավոր է՝

2.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ղեկավարվելով Պրինցիպալի իրավունքների և օրինական շահերի առավելագույն պաշտպանության սկզբունքով:

2.2.2. Պատվերը Պրինցիպալին հասցնել կողմերի կողմից համաձայնեցված ժամկետներում, որը կախված է Պատվերի փոխադրման տեսակից:

2.2.3. Պայմանագրի գործողության, ինչպես նաև դրա ավարտից 1 տարվա ընթացքում այլ անձի /անձանց/ չհայտնել տեղեկություններ, որոնք ձեռք է բերել սույն պայմանագրի կատարման ընթացքում, և որոնք կարող են պարունակել Պրինցիպալի անհատական տվյալներ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և, եթե նման տվյալների բացահայտումը անհրաժեշտ են սույն պայմանագրով Գործակալի ստանձնած պարտականությունները ի շահ Պրինցիպալի կատարելու համար:

2.3. Պրինցիպալն պարտավոր է՝

2.3.1. ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրով սահմանված գինը.

2.3.2. Հատուցել Պրինցիպալի հաշվին Գործակալի կատարած բոլոր ծախսերը.

2.3.3. ընդունել Պատվերը այն իրեն հասցնելուն պես, կամ Պատվերի ստացման վերաբերյալ ծանուցում ստանալու պահից քսան աշխատանքային օրվա ընթացքում ընդունել Պատվերը Գործակալի գրասենյակում:

2.3.4. Այն դեպքում, եթե Պատվերը չի գնվում Գործակալի միջոցով, տեղեկացնել Գործակալին Պատվերի պարունակության, առանձնահատկությունների մասին,

ինչպես նաև հայտնել այլ տեղեկություններ Պատվերի մասին, որը կպահանջվեն Գործակալի կողմից: Սույն կետում նախատեսված տեղեկությունները Գործակալին չբացահայտելու դեպքում Գործակալն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները կատարելուց և անմիջապես լուծել սույն պայմանագիրը: Սույն կետում նշված տեղեկությունների թերի կամ ոչ հավաստի լինելու դեպքում Պրինցիպալը կրում է ողջ պատասխանատվությունը Գործակալի, պետական մարմինների և երրորդ անձանց առջև:

2.4. Պրինցիպալն իրավունքունի`

2.4.1. ցանկացած ժամանակ տեղեկանալ Գործակալի Ծառայությունների ընթացքի մասին` անհրաժեշտ ծավալի տեղակատվություն պահանջելու և ստանալու եղանակով, սակայն Գործակալի բնականոն աշխատանքին չխոչընդոտելու և լրացուցիչ տեխնիկական բարդություններ չստեղծելու պայմանի պահպանմամբ:

2.5. Գործակալն իրավունքունի`

2.5.1. պահանջել վճարել Պայմանագրով սահմանված գինը.

2.5.2. Պահել Պատվերը մինչև Պրինցիպալի կողմից դրա համար վերջնական վճարման կատարումը.

2.5.3. Պատվերի Պրինցիպալին նշած հասցեին հասցնելու անհնարինության դեպքում անմիջապես այդ մասին հայտնելով Պրինցիպալին` դադարեցնել սույն պայմանագիրը և վերադարձնել Պրինցիպալի վճարած գումարը:

3. ԳՈՐԾԱԿԱԼԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԶԱՏՈՒՑՈՒՄԸ

3.1. Սույն Պայմանագրով Գործակալի վարձատրությունը ներառում է «Գնիր իմ փոխարեն» ծառայության և Պատվերի փոխադրման արժեքի հանրագումարը:

3.2. Կողմերը համաձայնվում են, որ Պատվերի փոխադրման գումարը որոշվում է Պատվերը Գործակալի կամ վերջինիս գործընկերոջ պահեստ հասնելու պահին, և որի մասին Պրինցիպալը տեղեկացվում է Գործակալի ընթացակարգերին համապատասխան, այնուհանդերձ եթե Պատվերի` մինչև բեռնափոխադրման հանձնումը ընկած ժամանակահատվածում ծառայության ինքնարժեքը բարձրացել է հինգ և ավելի տոկոսով, Ընկերությունն իրավունք է վերապահում միակողմանի վերանայել ծառայության արժեքը:

3.3. Պրինցիպալը տեղյակ է Գործակալի կողմից առաջարկվող ծառայությունների գներին, որոնք վերջինիս համար ընդունելի են:

3.4. Պրինցիպալի պահանջի դեպքում Գործակալը պարտավորվում է Պրինցիպալին ներկայացնել վարձատրության գումարի ձևավորման հստակեցված հաշվարկ:

3.5. Պրինցիպալը պարտավոր է հատուցել Գործակալին սույն պայմանագրի շրջանակներում Պրինցիպալի անունից կատարված ծախսերի համար:

4. ԱՆՅԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի

լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պրինցիպալի կողմից սույն օֆերտան ակցեպտավորելու պահից, որը կարող է արտահայտվել՝ վճարում կատարելու, Պատվերի հայտը Գործակալին տալու կամ ցանկացած այլ գործողության կատարման պահից, որը կհավաստի, որ Պրինցիպալն ընդունել է սույն պայմանագրի պայմանները:

5.2. Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում հաշվարկները կատարվում են՝ ելնելով մատուցված ծառայությունների փաստացի ծավալից:

5.3. Պրինցիպալի կողմից Գործակալի ծառայությունները պայմանագրով պայմանավորված ժամկետներում չվճարելու դեպքում Գործակալն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը՝ մինչև դրանց վճարման պահը: Նման դադարեցումը չի համարվում Գործակալի պարտականությունների չկատարում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Կողմերն ընդունում են, որ Պատվերը կարող է Պրինցիպալին հասնել կողմերի կողմից որոշված ժամկետներից ավելի ուշ, որի համար Գործակալը պատասխանատվություն չի կրում, եթե ապացուցում է, որ Պատվերի ուշացումը տեղի է ունեցել իրենից չկախված հանգամանքների ուժով:

6.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման պարտավորությունը պատշաճ չկատարելու դեպքում Պրինցիպալը պարտավորվում է Գործակալին վճարել տույժ՝ ժամկետանց գումարի 0,3 տոկոսի չափով, յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

6.4. Պրինցիպալը պատասխանատվություն է կրում Գործակալի կայքով կամ որևէ այլ կերպ Գործակալի մոտ գտնվող իր հաշվին մուտքագրված գումարների ծագման օրինականության համար: Այն դեպքում, եթե երրորդ անձանց կողմից Գործակալին կամ այլ կազմակերպության պահանջ է ներկայացվում մուտքագրված գումարների օրինականության կապակցությամբ կամ կատարվում է գումարի հարկադրական վերադարձ, Պրինցիպալը պարտավոր է հատուցել Գործակալի կրած վնասները՝ հետգանձված գումարների չափով: Մինչև վնասների հատուցումը Գործակալն իրավունք ունի պահել և Պրինցիպալին չհանձնել Պատվերները:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը:

8.2. Եթե սույն պայմանագրի որևէ դրույթ անվավեր ճանաչվի, ապա դրա մյուս դրույթները չեն կորցնում իրենց ուժը:

8.3. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և Գործակալի ինտերնետային կայքում հրապարակված Ընդհանուր դրույթներով և պայմաններով:

8.4. Սույն Պայմանագիրը հանդիսանում է Պրինցիպալի կողմից Գործակալին տրված լիազորագիր՝ Պրինցիպալի անունից, Պրինցիպալի համար, Պրինցիպալի միջոցների հաշվին, երրորդ անձից գնում կատարելու, ՀՀ ներմուծելու, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում հանդես գալու՝ մաքսային ձևակերպումներ կատարելու, Պրինցիպալի անունից մաքսային հայտարարագրեր ներկայացնելու լիազորությամբ, նաև սույն լիազորությունների ծավալով այլ անձի վերալիազորելու իրավունքով: Իր պարտականությունների բարեխիղճ կատարման նպատակով Գործակալն իրավունք ունի Պրինցիպալից պահանջել Գործակալին կամ նրա կողմից նշված անձին տրամադրել սույն պայմանագրից առանձին լիազորագիր:

8.5. Պրինցիպալը տեղյակ է ՀՀ տարածք բեռների ներկրման և դրանից բխող այլ անհրաժեշտ ու համապատասխան օրենքերին, ինչպես նաև գիտակցում է, որ մաքսագերծման հետ կապված որևէ ծախս ներառված չէ Գործակալի վարձատրության մեջ:

8.6. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով: